է լցրել ժողովրդի համբերութեան բաժակը: Չի կարելի բացառել, որ դա նաեւ դիւանագիտական քայլ էր նրա կողմից, որպէսզի կարգաւորէր յարաբերութիւնները Սելեւկեանների հետ, ինչպէս նաեւ ստանար նրանց մօտ գտնուող մանկահասակ Արտաշէսին[23]: Նա, կարծես թէ, կանխազգում էր, որ վաղ թէ ուշ՝ Արտաշէսից իրեն վտանգ է սպառնալու, ուստի, հաւանաբար, ցանկութիւն ունէր նրանից ազատուել Ֆիզիկապէս: Փաստօրէն, Պատմահայրն իրար է միացնում պատմական մի քանի իրադարձութիւններ, որոնք կատարուել են Երուանդ Վերջինի ժամանակներից սկսած մինչեւ Վեսպասիանոս եւ Տիտոս կայսրերի կառավարման տարիները: Ինչպիսի մեկնաբանութիւններ էլ տանք այս դէպքերին, այսուհանդերձ, դրանց հիմքում ընկած են նաեւ Ք.յ. 37 թ. համաձայնագրի հետ առնչուող դէպքերը, որով Մեծ Հայքը տարածքային անդառնալի կորուստներ է ունեցել նաեւ իր հարաւարեւմտեան սահմանագլխին:

37 թ. պայմանագրով Հայաստանից ապօրինաբար վերցուեցին ոչ միայն տարածքներ, այլեւ երկրի թագաւոր ճանաչուեց կայսրութեան դրածոն, օտարազգի Միհրդատ Փառնաւազեանը: Նոյնիսկ 69-66 թթ. հայ-հռոմէական պատերազմից յետոյ, այս երկու երկրների միջեւ յարաբերութիւններն այդչափ լարուած եւ սրուած չէին, ինչպէս այժմ, քանզի կայսրութեան հակահայկական քաղաքականութիւնը ունէր խիստ ընդգծուած բնոյթ: Այս մասին, այդ թւում եւ՝ տարածքային որոշ փոխհատուցումների, մենք արդէն նշեցինք վերեւում:

Իրադրութիւնն արեւելքում կրկին թէժացաւ եւ լարուեց, չնայած մինչ այդ եւս բաւականին բարդ եւ հակասական էր, երբ 41 թ. սպանուեց Կալիգուլան, եւ կայսր հռչակուեց Կլաւդիոսը (41-54 թթ.): Փաստօրէն, Հռոմը կարողացաւ միայն ժամանակաւորապէս հասնել յաջողութեան, քանզի ի վերջոյ Մեծ Հայքում հաստատուեցին պարթեւ Արշակունիները:

23 Նոյն տեղում, Բ, լէ-լը:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕՁՆԵՑԻ. ՍԱԿՍ ԺՈՂՈՎՈՑՆ, ՈՐ ԵՂԵՆ Ի ՀԱՅՍ

(Գիտա-քննական բնագիր)

Ալեքսան Յակոբեան

Յովհաննէս Օձնեցի կաթողիկոսի (717-728 թթ.) «Սակս ժողովոցն, որ եղեն ի Հայս» վերտառութեամբ յայտնի երկը գրուել է Մանազկերտի ժողովից յետոյ, այսինքն՝ 726 թ. յաջորդող երկամեայ ժամանակահատուածում, ինչպէս այդ մասին նշւում է հէնց նրա բնագրի որոշ կտորներում: Հեղինակը սկզբում համառօտ թուարկում է իրենից առաջ Հայաստանում տեղի ունեցած վեց կարեւորագոյն եկեղեցական ժողովները, ապա մանրակրկիտ ներկայացնում ասորի վարդապետների մասնակցութեամբ Ապահունիք գաւառի Մանազկերտ «գիւղում» իր գումարած ժողովում քննարկուած հարցերը եւ դաւանական յարակից խնդիրները:

Երկի առաջին մասում Յովհաննէս Օձնեցու շարադրած նիւթի մեծ մասը աղբիւրագիտական իմաստով եզակի է: Թէպէտ հեղինակի տեղեկատուութիւնից դուրս են մնացել այլ սկզբնաղբիւրներից յայտնի բազմաթիւ ուրիշ կարեւոր ժողովներ (օրինակ՝ Կարինի (շուրջ 530 թ.), Դուինի (607 եւ 645 թթ.) եւ այլն), սակայն, միւս կողմից, ըստ էութեան, միայն նրան ենք պարտական Հայաստանում Գրիգոր Լուսաւորչի կողմից Նիկիայի տիեզերական ժողովից յետոյ, այդպէս նաեւ՝ Ներսէս Մեծի կողմից Կոստանդնուպոլսի, իսկ Սահակ Պարթեւի ու Մաշտոցի կողմից՝ Եփեսոսի տիեզերական ժողովներից յետոյ ազգային ժողովների գումարման վերաբերեալ եզակի հաղորդումների համար:

Ի դէպ, նշուած ժողովներից առաջինի թուագրումը՝ Նիկիայի տիեզերական ժողովից (325 թ.) յետոյ եւ Լուսաւորչի քահանայապետութեան «ի» (քսաներորդ) տարում (այդպիսի թուագրում է տալիս նաեւ հայ քաղկեդոնական պատմական աւանդոյթը ենթադրաբար Ը դարում ամփոփած «Նարրացիո»-ն), միայն առաջին հայեացքից է թւում հաւաստիութիւնից հեռու (325/6-20=305/6): Եթէ ենթադրենք, որ «ի» ընթերցումը կարող էր առաջ գալ գրչական մի բաւական տարածուած սխալ վերծանութեան արդիւնքում՝ նախնական «Բժ» (=երկոտասան) թուից, ապա դժուար թէ հնարաւոր լինի պատահական համարել այս վերականգնուած թուականի ճշգրիտ համապատասխանութիւնը Կեսարիայում Գրիգոր Լուսաւորչի եպիսկոպոսական ձեռնադրման ժամանակին (325/6-12=314): Դա, ըստ Հ. Պողոս Անանեանի վերջնական ճշգրտման, տեղի է ունեցել Լուսաւորչի քահանայանալուց (Վիրապից դուրս գալուց յետոյ՝ 311/312) մօտաւորապէս երկու տարի անց՝ 314 թ. աշնանը: Իսկ սա յուշում է Յովհաննէս Օձնեցու ձեռքի տակ գրաւոր սկզբնաղբիւրի (գուցէ անգամ՝ ժողովական փաստաթղթի) եղած լինելու ենթադրութիւնը, որը հնարաւոր է տարածել նաեւ յաջորդ՝ 381 եւ 431 թթ. յետոյ տեղի ունեցած երկրորդ եւ երրորդ ժողովների վերաբերեալ հաղորդումների վրայ:

Շահապիվանի (444 թ.) եւ «Քաղաքուդաշտի» (506 թ.) ժողովների յիշատակութիւնից յետոյ հեղինակը բաւականին մանրամասն ներկայացնում է վեցերորդ՝ Դուինում 554 թ. Ներսէս Բագրեւանդացու գումարած ժողովը (որի ընդունած փաստաթղթերը պահպանուել են «Գիրք թղթոց»-ում եւ «Կանոնագիրք Հայոց»-ի մեծ խմբագրութեան տարբերակներում), ինչպէս նաեւ հանգամանալից փնովում 632

© National Library of Armenia

Թ. Կարինի ժողովում Եզը Փառաժնակերտցի կաթողիկոսի հեռանալը ուղղափառ դաւանութիւնից: Ընդ որում բուն ժողովը նա հանում է Հայոց ժողովների թուարկման շարքից՝ այդպիսով Մանազկերտին ժողովն անուանելով հերթական՝ եօթերորդ թուահամարով:

Գրականութեան մէջ կարծիք է արծարծուել, թէ «Սակս ժողովոցն» երկը չի կարող լինել (գոնէ Անտոնեանց գրչագրում մեզ հասած վիճակում) Յովհաննէս Օձնեցու հարազատ ստեղծագործութիւնը (չնայած գրողի ուղղակի հաւաստիացումներին. հմմտ. «Ահաւասիկ ես՝ Յովհաննէս Հայոց կաթուղիկոս, գրեցի իմով ձեռամբ զայս կանոնս...»), քանի որ նրա շարադրանքը որոշ անփութութեան եւ խառնափնթորութեան տարրեր է պարունակում, ինչը չի կարող բնորոշ լինել գիտնական հայրապետին: Սակայն իրականում նման մտայնութիւնը գալիս է երկի ոչ ուշադիր ընթերցանութիւնից եւ միայն հպանցիկ հայեացքից առաջացող նրա շտապողական գնահատականից՝ իբրեւ հէնց միայն ժողովների մասին պատմական աշխատութիւն: Այդ թեթեւ մօտեցումից վերանալու դէպքում շարադրանքի լեզուի եւ ոճի ակնառու համապատասխանութիւնը Օձնեցու մնացեալ երկերին այլեւս չի կարող անկարեւոր համարուել:

Անհրաժեշտ է լրջօրէն արձանագրել, որ Մանազկերտի ժողովի հիմնական դաւանական խնդիրը հանգամանալիօրէն ներկայացնելուց յետոյ հեղինակը բաւական մանրամասն մտքեր է շարադրում եօթ (կամ ութ), այսպէս ասած, կանոնակարգային խնդիրների մասին, որոնք ինչ-որ չափով նմանւում են ընդարձակ մեկնաբանուած կանոնական դրոյթների: Այդպիսի հեղինակային մօտեցում նկատւում է նաեւ Յովհաննէս Օձնեցու մէկ այլ՝ «Ատենաբանութիւն» անուանուած երկում, որտեղ նոյնպէս շուրջ մէկուկէս տասնեակ կանոնական դրոյթներ շարադրուած են ընդարձակ մեկնաբանուած տարբերակով եւ դրանց յաջորդում են բուն կանոնները՝ թուով երեսուներկու: Ըստ այսմ, նախ եւ առաջ՝ աւելի հաւանական է կանգ առնել այն գնահատականի վրայ, թէ «Սակս ժողովոցն» գրուածքն իր այսպիսի իւրայատուկ կառուցուածքով ու ձեւով, թերեւս, սկիզբը եւ խթանն է եղել սեփական կանոնախումբ շարադրելու հեղինակի դաղափարի՝ ներառելով այն (նախադիր «Ատենաբանութեան» հետ միասին) «Կանոնագիրք Հայոց» վիթխարի ժողովածոյի մէջ, որի համախմբումն ինքն սկսել էր դեռեւս կաթողիկոսական ձեռնադրութիւնն ընդունելուց առաջ: Վերջին հանգամանքը պարզ երեւում է նրա Ցիշատակարանի յայտնի վկայութիւնից. «...կամեցայ զբովանդակ զառ ի նոցանէն կանոնական սահմանեալ բան ի միում տեղւոջ դեղեցկագործ մատենիւ ի հայրապետանոցի աստ արմատացուցանել: Ուրանաւր եւ զիս աստուածային Հոգին վերակարգեաց յաթոռ սրբոյն Գրիգորի, ի կաթողիկոսութիւն աշխարհիս Հայոց՝ Յովհաննէս՝ նուաստագոյն յիմաստասիրականաց խմբից...»:

Բացի այդ, անհրաժեշտ է նկատել, որ «Սակս ժողովոցն»-ը իր անմիջական ու անպաճոյճ ոճով, շարադրանքի՝ բանաւոր խօսքին մօտեցող լեզուով ու հեղինակային եսի անթաքոյց առատութեամբ թողնում է այն տպաւորութիւնը, թէ դա Մանազկերտի ժողովի աւարտից եւ ասորի վարդապետներին ճանապարհ դնելուց կարճ ժամանակ անց եւ «մէկ շնչով» շարադրուած (այսինքն՝ հետագայում յատուկ չսրբագրուած) մի իւրօրինակ հաշուետուութիւն է, ասես՝ կենդանի ընթերցելու համար նախորդ պատասխանատու ժողովի արդիւնքների ամփոփմանը եւ հետագայ անելիքների յստակեցմանը նուիրուած՝ իր համախոհների արդէն մէկ այլ հաւաքոյթում: Հմմտ. «Ահաւասիկ զայս գրեցաք կանոնս... ամենայն եպիսկոպոսաւք եւ քահանայիւք եւ ուխտի մանկամբք եկեղեցւոյ սրբոյ»: Յատկանշական է, որ գրուածքի վերջնամասում անգամ ուղղակի, ասես՝ աշխատանքային յանձնարարական է տրւում ժամանակի նշանաւոր վարդապետին (հմմտ. «Հրաման տամ մեծի փիլիսոփայիս Արշարունեաց քորեպիսկոպոսի»)՝ պատրաստելու կոնկրետ գործ մի արդիական խնդրի վերաբերեալ. յայտնի է, որ այդ յանձնարարականն ի կատար է ածուել, եւ, անկասկած, դրա արդիւնքում է ստեղծուել Գրիգորիս Արշարունու «Մեկնութիւն ընթերցուածոց»-ը՝ անկիւնաքարային կէտերում վերջնականապէս համակարգելով նոր պայմանների համապատասխանող Հայոց եկեղեցական տօնացոյցը:

Գիրք թղթոց-ի յայտնի Անտոնեանց օրինակի (ներկայումս Զմմառում պահուող, իսկ 1901-ին բարեխղճօրէն վերարտադրուած Թիֆլիսեան հրատարակութիւնում) եւ համառօտումներով առատ, ըստ էութեան, առանձին խմբագրութիւն ներկայացնող, այսպէս կոչուած, «Էջմիածնական Թղթոց գրքի» երկու ձեռագրերից մէկի (ՄՄ թիւ 3062. միւսում՝ ՄՄ թիւ 2966, այս նիւթը չի ընդօրինակուել) ընթերցումների համադիր օգտագործմամբ կազմուած Յովհաննէս Օձնեցու Սակս ժողովոցն-ի քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա ութերորդդարեան վիճակի մասին:

Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում, ցաւօք, հնարաւոր չէր հաշուի առնել Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեան, ըստ ամենայնի, միեւնոյն մայրին յանգող երեք գրչագրերից՝ թիւ 858 (1678 թ.), թիւ 960 (1602 թ.), եւ թիւ 1009 (ԺԸ դար), վերջինի բոլոր տարընթերցումները (առաջինները համեմատուած են ըստ ՄՄ-ում առկայ «դրսից ստացուած» մանրաժապաւէնների), բացի այն հատուածից, որը երջանկայիշատակ սրբազան հայր Նորայր Պողարեանը տպագրել է նախ Երուսաղէմի ձեռագրացուցակում (թիւ 858 գրչագրի նկարագրութեան մէջ), ապա Գիրք թղթոց-ի իր հրատարակութեան բնագրում՝ իբրեւ լրացում Թիֆլիսեան տպագրի պակասի (Անտոնեանց գրչագրում թերթի կորստի հետեւանքով): Սակայն նշելի է, որ, ինչպէս երեւում է առաջինների ամբողջական եւ վերջինի՝ հրատարակուած կտորների համեմատութիւնից, չնայած վերնագրի տարբերութեանը (հմմտ. «Կանոն սուրբ հայրապետին տիեզերալուր Հայոց Մեծաց Յօհաննու Օձնեցւոյն եւ այլ սուրբ հարանցն Հայոց եւ Ասորւոց»)՝ այդ բնագիրը եւս, ըստ ամենայնի, ներկայացնում է Օձնեցու երկի ամբողջական տարբերակը (=Անտոնեանց գրչագրի խմբագրութիւնը): Միաժամանակ պարզուեց, որ Մաշտոցի անուան Մատենադարանի թիւ 3076 ժողովածոյում պահպանուած անվերնագիր նիւթի (վերտառութեան տեղը գրչի կողմից բաց է թողնուել՝ հետագայում միւս վերնագրերի նմանութեամբ կարմրատառ կամ զարդանախշ գրելու համար եւ մոռացութեան հետեւանքով վրիպուել)՝ մեր կողմից m տառանիշով համեմատուած ընթերցումներն ամբողջապէս համընկնում են Երուսաղէմի ձեռագրերի բնորոշ ընթերցումների հետ (հմմտ., օրինակ, մէկ-երկու տողի պակասը՝ նշուած էջ 129, տողատակի ծանօթագրութիւն 14-ում):

Ի տարբերութիւն երուսաղեմեան երեք եւ ՄՄ թիւ 3076 գրչագրերի՝ ՄՄ թիւ 500 ճառընտիրային ժողովածոյի տարբերակը էապէս կրճատուած ու խմբագրուած է, այդ թւում՝ այլ աղբիւրների տեղեկութիւնների օգտագործմամբ եւ բովանդակային լուրջ յաւելումներով: Այն, ըստ էութեան, անթաքոյց ձեւով վերածուած է ինքնուրոյն հեղինակային ստեղծագործութեան, որտեղ անգամ Յովհաննէս Օձնեցու անունը նշուած է երրորդ դէմքով (հմմտ. էջ 104, ծան. 18-ում. «Թ. Իններորդ ժողով արար Յովհաննէս կաթողիկոս, որ եւ Ի-

© National Library of Armenia

մաստասէր, ի ՃՀԵ թուականիս Հայոց, ի Մանազկերտի»): Այնուամենայնիւ, օգտակար ենք համարել Ը դարի հեղինակային սկզբնօրինակին, ըստ ամենայնի, ինքնուրոյնաբար յանգող այդ ճառընտիրային բնագրի ընթերցումները եւս համեմատելու ամբողջապէս (s տառանիշով):

Բնագրի տողատման եւ կէտադրման խնդրում էապէս օգտուել ենք Հ. Նորայր Պողարեանի՝ վերը նշուած հրատարակութեան մէջ կատարուած աշխատանքից:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Հ. Ն. Ակինեան,** *Յովհաննու Օձնեցոյ Նորագիւտ գրուածք մը,*- «Յուշարձան», Վիեննա, 1911

2. **Հ. Ն. Ակինեան, Հ. Հ. Ոսկեան,** *Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին,* հտ. Բ,- «Անտոնեան հաւաքածոյ», Վիեննա, 1971

3. **Ա. Բոզոյեան,** *Յովհաննէս Օձնեցին եւ «Սակս ժողովոց» երկի բնագիրը,*- «Սուրբ Յովհան Օձնեցի հայրապետը եւ իր ժամանակը» գիտաժողովի նիւթեր», Վաղարշապատ - Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2004

4. **Ե. Գալստեան,** *Յովհաննէս Օձնեցուն վերագրուած մի գրութեան հեղինակի հարցի շուրջը,* ՊԲՀ, 1977, թիւ 3

5. **Ա. Զամինեան,** *Հայոց եկեղեցու պատմութիւն,* Ա-Բ հատոր, Նոր Նախիջեւան, 1908-1909

6. *Գիրք թղթոց,*- «Մատենագրութիւն նախնեաց», Թիֆլիս, 1901

7. *Գիրք թղթոց,* Երկրորդ հրատարակութիւն [աշխատասիրութեամբ Ն. արքեպս. Պողարեանի], Երուսաղէմ, 1994

8. **Ե. Տէր-Մինասեան,** *Պատմա-բանասիրական հետազօտութիւններ,* Երեւան, 1971

9. **Ա. արքեպս. Մխիթարեանց,** *Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ հանդերձ կանոնադրութեամբ ի պէտս ժառանգաւորաց,* Վաղարշապատ, 1874

10. **Յովհաննու Իմաստասիրի Աւձնեցւոյ** *Մատենագրութիւնք,* Վենետիկ - Ս. Ղազար, 1833

11. **Ն. եպս. Պողարեան,** *Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց ի Երուսաղէմի...,* Բ, Գ հատորներ, Երուսաղէմ, 1968, 1969

12. **Մ. արքեպս. Օրմանեան,** *Ազգապատում. Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը՝ յարակից ազգային պարագաներով պատմուած, Ա հատոր,* Վաղարշապատ - Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001

13. **Ա. Յակոբեան,** *Յովհաննէս Օձնեցու «Կանոնագիրք Հայոց» ժողովածոյի խմբագրութիւնների խնդիրը եւ Անանիա Մոկացին,* «Հանդէս Ամսօրեայ», ՃԻԱ տարի, Վիեննա-Երեւան, 2007

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

a - Զմմառի ձեռ. թիւ 35 (ըստ *Գիրք թղթոցի,*- Թիֆլիս, 1901), ժամանակը՝ 1298 թ.

e - ՄՄ ձեռ. թիւ 3062, ժամանակը՝ ԺԸ դ.

i - Երուսաղէմի ձեռ. թիւ 858, ժամանակը՝ 1678 թ. (ՄՄ դրսից ստացուած մանրաժապաւէնների հաւաքածոյ, թիւ 1245)

i_1 - Երուսաղէմի ձեռ. թիւ 960, ժամանակը՝ 1602 թ. (ՄՄ դրսից ստացուած մանրաժապաւէնների հաւաքածոյ, թիւ 1246), (նոյն մատենադարանի թիւ 1009 (ժամանակը՝ ԺԸ դ.) ձեռագրի մի քանի տողի ընթերցումները (ըստ Հ. Ն. Ակինեանի եւ Հ. Հ. Ոսկեանի ձեռագրացուցակի) տրուած են i_2 տառանիշով)

m - ՄՄ ձեռ. թիւ 3076, ժամանակը՝ ԺԷ դ.

s - ՄՄ ձեռ. թիւ 500, ժամանակը՝ ԺԴ դ.

ՅՈՎՀԱՆՆՈՒ[1] ԻՄԱՍՏԱՍԻՐԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ՝ ՍԱԿՍ[2] ԺՈՂՈՎՈՑՆ[3], ՈՐ ԵՂԵՆ Ի ՀԱՅՍ[4]

Ա.[5] Առաջին ժողով[6] արար երանելի հայրապետն մեր սուրբն Գրիգոր[7], ի քսաներորդ[8] ամի կաթուղիկոսութեան[9] իւրում[10], եւ յերեսուն եւ եթն[11] ամի թագաւորութեանն[12] Տրդատայ[13], ի թագաւորաբնակ քաղաքին յարքայութեանն[14] Հայոց, յորժամ եկն[15] Ռստակէս[16] ի Նիկիայ[17] սուրբ[18] ժողովոյն[19], բերելով ընդ ինքեան զԳիր[20] կանոնաց՝[21] թուեալ միահամար կարգաւ[22] տունս ԾԱ[23], յոր[24] նայեցեալ սրբոյն Գրիգորի՝ սուղ ինչ յաւելումն[25] արարեալ յեդեալ[26] կանոնսն սուրբ հայրապետացն, որք ի Նիկիայն[27] ժամանեալ ժողով[28]:

Բ.[29] Երկրորդ[30] ժողով արար սուրբն Ներսէս, յորժամ դարձաւ[31] ի Հայս[1] ի Կոստանդնու-

---

1 e *Յոհանու* փխ *Յովհաննու* (a) (a-ում վերնագրին նախորդում է տուեալ ժողովածոյում այս նիւթի ԾԷ համարը, i-ում՝ ԼԶ, իսկ e-ում՝ Թ հերթական համարը. i_2-ում, m-ում եւ s-ում նիւթերի համարներ չկան):

2 s *Վասն սուրբ* փխ *Յովհաննու Իմաստասիրի... Սակս* (ae)

3 e *ժողովոյն*, a *ժողովոց* փխ *ժողովոցն* (s)

4 a *Հայք*, s *Հայս՝ ի սրբոյն Գրիգորէ սկսեալ* փխ *Հայս* (e) / ii_1i_2 *Կանոն (i Կանօն) սուրբ հայրապետին տիեզերալուր (i_1 տիեզերալոյս) Հայոց Մեծաց Յոհանու Օձնեցւոյն (i_1 Յոհանու Օձնեցոյ) եւ այլ սուրբ հարանցն (i_1 հարանց) Հայոց եւ Ասորւոց (i_1 չիք եւ Ասորւոց)* փխ *Յովհաննու Իմաստասիրի...Հայս* (aes) (երկու տող. m-ում վերտառութեան տեղը գրչի կողմից բաց է թողնուել՝ հետագայում միւս վերնագրերի նմանութեամբ կարմրատառ գրելու համար եւ մոռացութեան մատնուել):

5 a չիք *Ա.* (eii_1ms) (հինգ գրիչներն էլ ձեւաւորել են այս հատուածահամար-ժողովահամարը լուսանցքում, փոքրատառով եւ պատուոյ նշանների մէջ. այդպէս նաեւ՝ յաջորդները):

6 ii_1i_2 *ժողովն* փխ *ժողով* (aems)

7 s *եղեւ ի Հայս* փխ *արար...Գրիգոր* ($aeii_1m$)

8 e *Ի*, i_1 *Ի-երրորդի*, i *քսաներորդի*, i_2 *Ի-երորդի*, m *ի Ի-երրորդի*, s *ի Ի* փխ *ի քսաներորդ* (a) (այս ժողովը Գրիգոր Լուսաւորչի քահանայապետութեան «քսաներորդ տարով» է թուագրում նաեւ միայն յունարէն թարգմանութեամբ մեզ հասած «Narratio de rebus Armeniae» կոչուած Ը դարի հայ-քաղկեդոնական պատմական երկը):

9 ii_1i_2m *կաթուղիկոսութեանն* փխ *կաթուղիկոսութեան* (aes)

10 s *սրբոյն Գրիգորի* փխ *իւրում* ($aeii_1m$)

11 i *Ե*, s *Է* փխ *եթն* (a) / e *ԼԷ*, i_1m *յԼԵ* փխ *եւ յերեսուն...եթն* (ais)

12 m *թագաւորութեան*

13 i_1ms *Տրդատա*

14 m *յարքայութեան*

15 s *գալն* փխ *թագաւորութեանն...եկն* (երկու տող) ($acii_1m$)

16 e *Ընդստակէս*, i *Արիստակէս*, s *Առիստակէսի՝ կանոնական գրով* փխ *Ռստակէս* (ai_1m)

17 i_1 *Նիկիա*, i *Նիկիոյ* փխ *Նիկիայ* (aems) (i-ի այդ ընթերցումն է իր տպագրում դրել Հ. Ն. Պողարեանը)

18 s չիք *սուրբ* ($acii_1m$)

19 m *ժողովոյ*

20 m *Գիր*

21 i *կանոնացն*

22 e *միահամուռ կարգաց* փխ *միահամար կարգաւ* (aii_1m)

23 i_1m *Ա* փխ *ԾԱ* (ae) / i չիք *ԾԱ* (ըստ Հ. Ն. Պողարեանի՝ վերականգնելի է *Ի* փխ *ԾԱ*, սակայն նշելի է, որ Յովհաննէս Օձնեցու «Կանոնագիրք Հայոց»-ի սկզբնօրինակում եւս (մինչեւ նրա մեծ խմբագրումը Թ դ. երկրորդ կէսում), ըստ մեզ հասած չխմբագրուած տարբերակի գրչագրերի՝ ներկայացուած են եղել ոչ միայն բուն Նիկիայի ժողովի 20 կանոնները, այլեւ նրան նախորդած Անկիւրիայի, Կեսարիայի (յունարէն տարբերակում՝ նախորդի կազմում) եւ Նէոկեսարիայի ժողովներինը, ընդ որում՝ ընդամենը հէնց 50 կամ 51 կանոն (տե՛ս մեր պատրաստած նոր քննական բնագիրը):

24 a *յորս* փխ *յոր* (ci_1m) / i *այսր* փխ *ԾԱ, յոր* (իմա՛ *Ա յոր*-ից)

25 m *աւելումն*

26 i *եղեալ*

27 e *Նիկիա* փխ *Նիկիայն* (aii_1m)

28 s չիք *բերելով ընդ...ժողով* ($acii_1m$) (վեց տող)

29 a չիք *Բ.* (cii_1ms)

30 e *Երկու* փխ *Երկրորդ* (aii_1ms)

31 e *դարձաւն*, s *եկն* փխ *դարձաւ* (aii_1m)

© National Library of Armenia